ծառայությունների մատուցման թիվ Ի-22/30 պայմանագիրը, որի 4.1. կետի համաձայն՝ պայմանագրի գինը կազմել է 200.000 ՀՀ դրամ:

Դատարանը, հաշվի առնելով գործի քննության տևողությունը, փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, գործի շուրջ փաստաբանի կողմից մատուցված ծառայությունները, ելնելով վեճի էությունից և դրա առանձնահատկությունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման մերժման, գտնում է, որ սույն գործով 200.000 ՀՀ դրամը հանդիսանում է փաստաբանի վարձատրության ողջամիտ գումարը, հետևաբար գտնում է, որ «Արմստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ «Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամի ենթակա է բռնագանձման 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ պետական տուրքից և փաստաբանի վարձատրության գումարից զատ այլ դատական ծախսեր չկան, դատարանը դատական ծախսերի հարցը մնացած մասով համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Արմստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 29.04.2022 թվականին կնքված պայմանագիրը, 25.08.2022 թվականին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք «Արմստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելն արգելելու պահանջների մասին, մերժել:

2. «Արմստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ «Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 28.09.2022 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

4. Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

ՌՈՒԲԵՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Ծանոթություն: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ «____» _____ 202 թ.

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**